«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
«3 թեմաներով անվճար վերապատրաստման դասընթացներ»

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից հայտարարված դրամաշնորհային ծրագրի շրջանակում «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը իրականացնում է «3 թեմաներով անվճար վերապատրաստման դասընթացներ»

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

«**Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնը համաֆինանսավորմամբ իրականացնում է 74 մասնակցի համար նախատեսված «3 թեմաներով անվճար վերապատրաստման դասընթացներ», որը հնարավորություն կտա՝**

- տվյալ մասնագիտացում ունեցող մասնակցին զարգացնել մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, ապահովել առաջխաղացում կարիերայում:
- ոլորտի սկսնակներին, բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և ունենալ առաջընթաց համապատասխան ոլորտում:

Ի՞ՆՉ Է ՊԵՏՔ ԻՄԱՆԱԼ

<u>Ո՞վ է իրականացնելու ծրագիրը</u>

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն խորհրդատվական և թրեյնինգային կազմակերպությունը համաֆինանսավորմամբ իրականացնում է «3 թեմաներով անվճար վերապատրաստման դասընթացներ»:

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնն իր գործունեության շուրջ 30 տարիների ընթացքում հասել է մեծ նվաճումների իրականացնելով բիզնեսի պլանավորման, կազմակերպման, կառավարման և զարգացմանն ուղղված նախագծեր Հայաստանում և 10-ից ավելի երկրներում: Մասնավորապես հատկանշական է ընկերության հարուստ փորձը դասընթացների կազմակերպման և անցկացման, ձեռնարկատիրության, փոքր և միջին բիզնեսի զարգացման բնագավառում:

«Բի Էս Սի»-ն, 1994թ-ից առ այսօր, ակտիվ համագործակցում է պետական կառույցների, տեղական և միջազգային հաստատությունների հետ՝ անմիջական աջակցություն ցուցաբերելով ձեռնարկատերերին և բիզնեսի ներկայացուցիչներին ՀՀ բոլոր մարզերում և Երևանում՝ մատուցելով խորհրդատվական, հետազոտական և թրեյնինգների անցկացման ծառայություններ:

Ո՞վ կարող է մասնակցել ծրագրին

«3 թեմաներով անվճար վերապատրաստման դասընթացներ»-ին կարող են մասնակցել՝

- ՏՏ և ԲՏ ոլորտի կազմակերպությունները, վերջիններիս աշխատակիցները, որոնք ըստ կարիքի կվերապատրաստվեն ծրագրի շրջանակում,
- Երեք ուղղությամբ մասնագիտացված աշխատակիցները, ովքեր ցանկանում են գրացնել աշխատանքային առաջընթաց իրենց ընկերությունում:

Մասնակցության պայմանները

Դասընթացին մասնակցելու համար դիմորդը պետք է ունենա անհրաժեշտ նվազագույն գիտելիքներ և հմտություններ՝

- Մաթեմատիկայի բազային գիտելիքներ
- Անգլերենի իմացություն (միջին (B1) կամ ավելի բարձր մակարդակ)
- Վերլուծական մտածողություն
- Տրամաբանություն
- Կրթվելու, զարգանալու, նորը սովորելու ձգտում

Դասընթացի գրանցումը տեղի կունենա 3 հիմնական փուլերով.

- Գրանցման թերթիկի լրացում,
- Առցանց թեստավորում,
- Ըստ անհրաժեշտության հնարավոր է նաև առցանց հարցազրույցի փուլ:

Դիմորդը գրանցման թերթիկը լրացնելուց հետո կանցնի առցանց տրամաբանական թեստ, որի անցողիկ շեմը հաղթահարելու դեպքում հարցազրույցների միջոցով կիրականացվի Նախապատվությունը տրվելու է 70%-ից բարձր միավորներ հավաքած մասնակիցներին:

Վերջնական ընտրության ժամանակ հաշվի են առնվելու դիմորդների դիմում հայտերը, ընդունելության թեստի արդյունքները և մոտիվացիան:

Դասընթացի արժեք

Դասընթացների ընդհանուր արժեքը 240,000 ՀՀ դրամ է, սակայն ի շնորհիվ ՀՀ ԲՏԱ նախարարության և «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից համաֆինանսավորման, այն կլինի **ԱՆՎՃԱՐ** բոլոր մասնակիցների համար:

Ի՞նչ ձևաչափով են լինելու դասընթացները

Դասընթացներն իրականացվելու են շաբաթական 2-3 անգամ (ընդհանուր 18-26 ժամ՝ յուրաքանչյուր դասը 2-3 ժամ տևողությամբ):

Խումբը կազմված է լինելու է առավելագույնը 25 ուսանողից:

Դասընթացների իրականացման ձևաչափ՝ առցանց (online):

Դիմորդի մասնակցությունը դասընթացին կդադարեցվի հետևյալ պայմանների դեպքում:

- Դասընթացին 50%-ից պակաս մասնակցության դեպքում
- Հանձնարարությունները պարբերաբար չկատարելու դեպքում

Ուսումնական ծրագիր

Դասընթացի մասնակիցները հնարավորություն կունենան մանրամասն ծանոթանալու հետևյալ մասնագիտացումներին՝

- Introduction to Python for Data Analysis (միջին մակարդակ)
- Linux + Introduction to Cloud (սկսնակ մակարդակ)
- Digital Marketing (միջին մակարդակ)

Դասընթացի ավարտին ուսանողների գիտելիքների ստուգում և արդյունքների ամփոփում

Դասընթացի ավարտին կանցկացվի առցանց քննություն/թեստ, որի արդյունքում կստուգվեն ուսանողների կողմից ձեռք բերված ինչպես տեսական գիտելիքները, այնպես էլ գործնական հմտությունները: Թեստը դրական կհամարվի 50% և ավել միավորներ ստանալու դեպքում:

Դասընթացի ավարտին մասնակիցները կունենան՝

- Սերտիֆիկացված նոր մասնագիտացում՝ նոր կամ խորացված գիտելիքներով
- բարելավված գիտելիքներ, շարունակելով շուկայում հանդես գալ որպես բարձրակարգ ու պահանջված մասնագետներ
- Աշխատանքային առաջընթաց համաատասխան մասնագիտացմամբ:

Յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո մասնակիցների կանցնեն 2-4 ժամ տևողության փափուկ հմտությունների (sofskill-ների) զարգացման դասընթացներ:

Վարպետության դասերի նպատակն է բարելավել մասնակիցների ժամանակի կառավարման, որոշումների կայացման, ներկայացման, հաղորդակցման և բանակցային հմտությունների փոխանցումն է:

Կոնտակտային տվյալներ

Վեբկայք www.bsc.am / Facebook- BSC Business Support Center | Facebook

Էլ. փոստ. info@bsc.am

Հեռ. 077 574 778

Գրանցման հղում՝ https://forms.gle/8ttUbQ2zCY1TwX856

Դասընթացավարներ՝

N	Անվանում	Դասընթացավար
1	Introduction to Python for Data Analysis (միջին մակարդակ)	Սուրեն Աբրահամյան: Staff Layout and Schematic Design Methodology Engineer at Qualcomm Լինկդինյան էջ՝ https://www.linkedin.com/in/suren-abrahamyan/
2	Linux + Introduction to Cloud (սկսնակ մակարդակ)	Սոնա Իսրայելյան Backend engineer - Brightcom Լինկդինյան էջ՝ https://www.linkedin.com/in/sona-israyelian/
3	Digital Marketing (միջին մակարդակ)	Գեղամ Վարդանյանը Digitain Group - Head of Digital Marketing Լինկդինյան էջ՝https://www.linkedin.com/in/gegham-vardanyan/